ԿԱՐԾԻՔ

Համլետ Գրիգորի Մկրտչյանի «ՀՀ տնտեսական զարգացման առաջնահերթությունները համաշխարհային տնտեսության մարտահրավերների համատեքստում» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.06 - «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Համաշխարհային տնտեսությունում արագ ընթացող փոփոխությունների համատեքստում աշխարհի գրեթե բոլոր երկրները, այդ թվում՝ Հայաստանը, բախվում են մի շարք մարտահրավերների, որոնք պահանջում են առկա տնտեսական ռազմավարությունների վերանայում և դրանց նոր ողղությունների մշակում՝ կայուն զարգացման ապահովման նպատակով: Համաշխարհայնացումը, տեխնոլոգիական նորարարությունները, համաշխարհային առևտրի կառուցվածքում փոփոխությունները, ինչպես նաև աշխարհաքաղաքական և սոցիալական գործոնները էական ազդեցություն ունեն հատկապես փոքր և զարգացող երկրների տնտեսությունների վրա:

Հայաստանի Հանրապետությունը, լինելով համաշխարհային տնտեսական համակարգի մաս, ակտիվորեն ինտեգրվում է միջազգային տնտեսական գործընթացներին, սակայն միևնույն ժամանակ բախվում է մի շարք մարտահրավերների: Դրանք են՝ արտաքին շուկաներից կախվածության բարձր մակարդակը, արտաքին ցնցումների նկատմամբ բարձր զգայունությունը, բնական ռեսուրսների սահմանափակությունը, բարդ աշխարհաքաղաքական իրավիճակը և ներքին արտադրության զարգացման անհրաժեշտությունը: Նշված հանգամանքները սրում են տնտեսական անվտանգության ապահովման խնդիրը, ինչը պահանջում է զարգացման ներկայիս մոդելի վերանայում և տնտեսության մրցունակության և կայունության բարձրացմանն ուղղված լուծումների որոնում:

Համաշխարհային տնտեսական ցնցումների համատեքստում, ինչպիսիք են համաշխարհային ֆինանսական ճգնաժամերը, էներգակիրների գների

փոփոխությունը, պատժամիջոցներն ու առևտրային պատերազմները, ինչպես նաև համաճարակները, Հայաստանի Հանրապետությանը անհրաժեշտ է մշակել ռազմավարություն, որը հաշվի կառնի նշված մարտահրավերները և կնպաստի արտաքին ցնցումների հնարավոր բացասական հետևանքների նվազեցմանը: Այս համատեքստում կարևորվում են տնտեսական դիվերսիֆիկացիան, նորարարական տեխնոլոգիաների զարգացումը, աշխատուժի կրթության և որակավորման մակարդակի բարձրացումը, ներդրումային միջավայրի բարելավումը և միջազգային տնտեսական միություններին ինտեգրումը:

Համաշխարհային տնտեսական մարտահրավերների համատեքստում Հայաստանի տնտեսական զարգացման առաջնահերթությունների ուսումնասիրությունը հրատապ խնդիր է դառնում այն առաջարկությունների մշակման համար, որոնք կարող են արդյունավետորեն արձագանքել արդի մարտահրավերներին և ապահովել երկրի կայուն և երկարաժամկետ զարգացումը: Նման հետազոտությունն անհրաժեշտ է ավելի ճկուն և ադապտիվ տնտեսական քաղաքականության մշակման համար, որը թույլ կտա արդյունավետորեն արձագանքել արտաքին տնտեսական միջավայրի փոփոխություններին և ապահովել սոցիալ-տնտեսական կայունություն:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները

Ատենախոսության նպատակն է համաշխարհային մարտահրավերների նկատմամբ ՀՀ տնտեսության խոցելիության և դրանց ազդեցության վերլուծության արդյուքնում ՀՀ տնտեսական զարգացման առաջնահերթությունների ձևակերպումը՝ ՀՀ տնտեսական աճի տեսանկյունից էական նշանակություն ունեցող ոլորտների կտրվածքով:

Այս նպատակին հասնելու համար աշխատանքում հեղինակի կողմից դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները՝

- ✓ ուսումնասիրել և վերհանել ժամանակակից համաշխարհային տնտեսության մարտահրավերները, առանձին ազգային տնտեսությունների խոցելիությունը կանխատեսող ցուցանիշները և զարգացման առաջնահերթությունները, ինչպես նաև էմպիրիկ գնահատականների հիման վրա պարզաբանել ՀՀ

տնտեսության վրա արտաքին շոկերի ազդեցության փոխանցման հիմնական ուղիները,

- ✓ ուսումնասիրել և քննական վերլուծության հիման վրա բացահայտել ներմուծման, արտահանման, ինչպես նաև հանքարդյունաբերության ու զբոսաշրջության ոլորտների աճի հիման վրա պայմանավորված տնտեսական աճի հիփոթեզների վավերականությունը (այլ երկրների օրինակով),
- ✓ պարզաբանել ՀՀ մրցակցային առավելությունները՝ արտահանվող ապրանքախմբերի քարտեզավորման և մի շարք ինդեքսների հաշվարկման հիման վրա, մատնանշել առկա մարտահրավերները և արտահանման դիվերսիֆիկացման հնարավորությունները,
- ✓ ուսումնասիրել համաշխարհային զարգացումների ազդեցությունը ՀՀ զբոսաշրջության ոլորտի վրա, բացահայտել վերջինիս խոցելիությունը և դերը տնտեսության մեջ, ինչպես նաև տնտեսաչափական գնահատման արդյունքում որոշակիացնել ոլորտի զարգացման առաջնահերթությունները,
- ✓ բացահայտել համաշխարհային զարգացումների ազդեցությունը ՀՀ մետաղական հանքաքարի արդյունահանման, ոլորտի խոցելիության վրա,
- ✓ գնահատել ներմուծման և զբոսաշրջության՝ որպես ՀՀ տնտեսական աճի ապահովման գործոնների դերը և զարգացման առաջնահերությունները,
- ✓ գնահատել մետաղական հանքաքարի արդյունահանման դերը ՀՀ տնտեսական աճի ապահովման գործում, տնտեսաչափական գնահատման արդյունքում որոշակիացնել ոլորտի զարգացման, այդ թվում ներդրումային միջավայրի առաջնահերթությունները:

Հիմնական գիտական արդյունքները և հետազոտության նորույթը

Ատենախոսական հետազոտության գիտական նորույթ պարունակող ամենակարևոր արդյունքները հետևյալն են՝

1. ՀՀ-ից արտահանվող ապրանքախմբերի քարտեզավորման և մի շարք ինդեքսների հաշվարկների հիման վրա, բացահայտվել են, մրցակցային առավելություն ունեցող ապրանքային խմբերը և որոշակիացվել են

տնտեսության, արտաքին շուկաների և արտահանման բազմազանեցման (դիվերսիֆիկացման) մոտեցումները:

2. Տնտեսաչափական մոդելների միջոցով գնահատվել է մի շարք գործոնների՝ ներմուծման, արտահանման, տնային տնտեսությունների կողմից վերջնական սպառման վրա ուղղվող ծախսերի դերը ՀՀ տնտեսական աճի ապահովման վրա:
3. Տնտեսաչափական գործիքակազմի կիրառմամբ գնահատվել է ՀՀ զբոսաշրջության ոլորտի նպաստումը տնտեսական աճին, բացահայտվել է արտաքին շոկերի նկատմամբ ոլորտի խոցելիությունը:
4. Հանքագործական արդյունաբերության հարկմանն առնչվող օրենսդրական փոփոխությունների ազդեցության վերլուծության և տնտեսաչափական գնահատման արդյունքում բացահայտվել է մետաղական հանքաքարի արդյունահանման ոլորտը ներկայացնող ընկերությունների դերը ՀՀ տնտեսական աճի ապահովման գործում, մատնանշվել են մարտահրավերները և առաջարկվել են ոլորտի զարգացման հնարավոր միջոցառումները:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը, ձևակերպված են ուսումնասիրության նպատակը և հիմնական խնդիրները, սահմանված են աշխատանքի արդյունքների գիտական նորույթն ու գործնական նշանակությունը, ինչպես նաև ներկայացված են հետազոտության մեթոդաբանական, տեսական և տեղեկատվական հիմքերը:

Ատենախոսության առաջին՝ **«Արտաքին շոկերը որպես տնտեսության զարգացման մարտահրավերներ և տնտեսական աճի հնարավորություն»** գլխում հեղինակի կողմից ներկայացված են վերջին ժամանակաշրջանի տնտեսական արտաքին մարտահրավերները, տնտեսության խոցելիությունը կանխատեսող ցուցանիշները: Հեղինակի կողմից ներկայացվել են նաև տնտեսության հիմնական առաջնահերթությունները, ինչպես նաև ներմուծման, արտահանման,

հանքարդյունաբերության ու զբոսաշրջության վրա հիմնված աճի հիփոթեզները՝ աշխարհի տարբեր երկրների և երկրների խմբերի օրինակներով: Բացահայտվել է, որ զբոսաշրջությունը և, մասնավորաբար, զբոսաշրջիկների կողմից կատարվող ծախսերը, ինչպես նաև հանքագործական արդյունաբերությունը ներկայացնող ընկերությունների արտադրանքի արտահանման ծավալների աճն, ընդհանուր առմամբ, դրական են ազդում երկրների տնտեսական աճի վրա:

Ատենախոսության երկրորդ՝ **«Համաշխարհային զարգացումները, ՀՀ տնտեսության խոցելիությունը և հնարավորությունները՝ ըստ առաջնահերթ ոլորտների»** գլխում հեղինակն ուսումնասիրել է ՀՀ մրցակցային առավելություններ ունեցող ապրանքային խմբերը, իրականացրել է արտահանվող ապրանքախմբերի քարտեզավորում, ինչպես նաև ուսումնասիրել է արտաքին մարտահրավերների ազդեցությունը ՀՀ զբոսաշրջության ոլորտի և մետաղական հանքաքարի արդյունահանման ընկերությունների վրա:

Ատենախոսության երրորդ՝ **«ՀՀ արտաքին տնտեսական կապերի առաջնահերթությունները»** գլխում ներկայացվել է ներմուծման և զբոսաշրջության, ինչպես նաև մետաղական հանքաքարի արդյունահանման դերը ՀՀ տնտեսական աճի ապահովման գործում, նախանշվել են նաև ոլորտային առաջնահերությունները: Հեղինակի կողմից հետազոտվել է նաև ՀՀ տնտեսական աճի բացատրման գործում ներմուծման դերը և այն, թե ինչպես է արտահանման, և տնային տնտեսությունների վերջնական սպառման վրա ուղղվող ծախսերի աճը հանգեցնում ներմուծման ծավալների փոփոխությանը:

Ատենախոսության «Եզրակացություններ և առաջարկություններ» բաժնում ամփոփվել և հակիրճ ներկայացվել են հետազոտության արդյունքում ստացված հիմնական եզրահանգումներն ու առավել առարկայական առաջարկությունները:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Աշխատանքը զերծ չէ նաև թերություններից: Նշենք դրանցից մի քանիսը.

1. Ներկայացվող հետազոտության մեջ համաշխարհային տնտեսության մարտահրավերները ուսումնասիրելիս, հեղինակն իր ուշադրությունը

կենտրոնացնում է միայն արտաքին շոկերի վրա, մինչդեռ դրանք մարտահրավերների մի մասն են հանդիսանում: Համաշխարհային տնտեսության մարտահրավերներին կարելի է դասել գլոբալ գնաճը, կլիմայի փոփոխությունը, տեխնոլոգիական փոփոխությունները, էներգետիկ փոխակերպումը, աշխարհի ժողովրդագրական պատկերի փոփոխությունը: Կարծում ենք, անհրաժեշտ էր հետազոտության առաջին գլխի սկզբում հիմնավորել, թե ինչու են հենց միայն արտաքին շոկերը առանձնացված մարտահրավերների լայն շարքում:

2. Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման առաջնահերթությունները ուսումնասիրելիս, հեղինակը տնտեսության ոլորտներից առանձնացնում է միայն մետաղական հանքաքարի արդյունաբերությունը և զբոսաշրջությունը, չհիմնավորելով, մեր կարծիքով, թե ինչու են ընտրված հենց այս ոլորտները:
3. Ատենախոսության առաջին գլխի 1.2 կետում հեղինակը մանրամասնորեն ներկայացնում է ՀՀ տնտեսության վրա արտաքին շոկերի ազդեցության փոխանցման հիմնական ուղիները, սակայն աշխատանքի հետագա շարադրանքում այդ ուսումնասիրության արդյունքները, մեր կարծիքով, լայն արտացոլում չեն գտնում:
4. Աշխատանքի երկրորդ գլխի 2.1 կետում հեղինակն իրականացրել է ՀՀ մրցակցային առավելությունների վերհանում և արտահանվող ապրանքախմբերի քարտեզավորում, բացահայտելով առկա մարտահրավերները և դիվերսիֆիկացման հնարավորությունները: Արժևորելով կատարված ծավալուն աշխատանքը, նշենք սակայն, որ ինչ մրցակցային առավելություններ էլ գոյություն ունենան ըստ հեղինակի հաշվարկների, կա մի գործոն, որն ըստ իս դրանք բոլորը զրոյացնում է: Խոսքը գնում է ՀՀ դրամի երկարամյա արժևորման մասին, որը հետևանքն է ոչ միայն ՀՀ տնտեսությունում վերջին տարիներին ընթացող գործընթացների, այլև ՀՀ Կենտրոնական բանկի կողմից վարվող քաղաքականության: Արտարժույթով պահվող ավանդների նկատմամբ ՀՀ ԿԲ կողմից կիրառվող պարտադիր պահուստավորման բարձր նորմը,

ինչպես նաև արտարժույթի շուկայում իրականացվող ինտերվենցիաները բերում են ՀՀ դրամի և անվանական, և իրական փոխարժեքի բարձրացմանը, ինչը ոչ մրցակցային է դարձնում և արտահանումը, և զբոսաշրջությունը, և IT-ոլորտում ծառայությունները:

Աշխատանքում այս՝ տնտեսական աճը սահմանափակող գործոնին, շատ քիչ ուշադրություն է հատկացվում:

5. Ընդհանուր առմամբ աշխատանքում առկա է ներկայացվող նյութի տրամաբանական հաջորդականության որոշակի խնդիր, ինչը հաճախ դժվարեցնում է հեղինակի ստացած արդյունքների ընկալումը:

Եզրակացություն

Բովանդակության հիման վրա կարելի է եզրակացնել, որ ատենախոսությունը իրենից լուրջ հետազոտական աշխատանք է ներկայացնում, ինչի մասին վկայում են ուսումնասիրության վերջում ներկայացված արդյունքները: Աշխատանքում օգտագործված տեսական և գործնական մոտեցումները, այնպես ինչպես ուսումնասիրության ընթացքում ստացված արդյունքները, գիտականորեն հիմնավորված, համոզիչ և ընդունելի են: Հետազոտության արդյունքում ներկայացված առաջարկությունները կիրառելի են և կարող են օգտակար լինել ՀՀ տնտեսական զարգացման ռազմավարության մշակման գործում:

Այս աշխատանքի ինքնուրույնությունը, ամբողջականությունն ու արժեքը, հետազոտությունում օգտագործված հարուստ տեսական և գործնական նյութերը թույլ են տալիս եզրակացնել, որ ատենախոսությունը արժանի է բարձր գնահատականի:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը և իր մեջ ներառում է հիմնական պայմաններն ու արդյունքները: Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են ատենախոսի հինգ գիտական հրապարակումներում:

Համլետ Գրիգորի Մկրտչյանի՝ **«ՀՀ տնտեսական զարգացման առաջնահերթությունները համաշխարհային տնտեսության մարտահրավերների համատեքստում»** թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-

ի կողմից թեկնածուական ատենախոսության համար ներկայացված պահանջներին, ՀՀ «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.06 – «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ի.Բ. Պետրոսյան

Ի.Բ. Պետրոսյանի ստորագրությունը
հաստատում եմ՝
Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի
գիտական քարտուղար, բ.գ.թ. Ռ.Ս. Կասաբաբովա

17 հունվարի 2025 թ.